

Վրեժ Զարույթունայան

ՇՈՒՇԵՅԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԿՏԱԿԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր - Շուշի, Զամբարձում Ստեփանյանց, Գրիգորի Թումայանց, Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիա, եկեղեցի, վեհափառ:

Կտակարարությունը մեր ժողովրդի բազմադարյա բարեգործության մշակույթի ակնառու դրսևորումներից է: Զայ բարեգործ կտակարարները զուրկ լինելով հայրենի պետականությունից և այլ պետությունների օրենքներին ապավինելով՝ իրենց վերջին կամքով երկարամյա աշխատանքի արդյունք-վաստակը ազգին էին կտակում: Ազգին, եկեղեցուն, վարժարանին, հիվանդանոցին, ուսանողին, մշակույթին նվիրաբերել են թե՛ նրանք, որոնց անուն-ազգանունը, ծննդյան ու մահվան տարեթվերը հայտնի չեն, և թե՛ շատ հայտնի բարեգործներ՝ հարստությունը ժառանգաբար ստացածները կամ տքնանքով ու չարչարանքով վաստակածները:

Կտակարարությունը միաժամանակ յուրատեսակ ազգային միաբանության դրսևորում էր: Կտակարարներին թելադրող և պարտադրող չկար, նրանց հորդորում էր սեփական խիղճն ու պատասխանատվության զգացումը, հայրենասիրական պարտքն ու քրիստոնեական հավատը: Կտակելի ունեցվածքի համար սահմանված չափ գոյություն չունեին, յուրաբանչուրն անում էր իր հնարավորության և ցանկության սահմաններում:

Այս դրսևորումն առանձնապես բնորոշ և արտահայտիչ էր արցախահայության, մասնավորապես շուշեցիների պարագայում, անկախ նրանից՝ ապրում էին Արցախում, թե՛ նրանից դուրս: Շատերը տարբեր հաստատությունների և ժողովրդի կարիքավոր հատվածի օգտին կատարած նվիրաբերություններից զատ, իրենց կտակում առանձին կետերով մաս են հատկացնում այս կամ այն եկեղեցու, դպրոցի շինությանը, բարգավաճմանը, կարիքավոր ուսանողների ուսմանը:

Ուսումնասիրելով Զայաստանի ազգային արխիվի Զայրապետական դիվանի ֆոնդում պահպանվող կտակների վերաբերյալ գործերը, Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիայի Էջմիածնի սինոդին ուղղված հայտարարություններն ու զեկուցագրերը՝ ներկայացնենք շուշեցի բարեգործների առավել արժանահիշատակ մի շարք կտակներ իրենց վերլուծականներով:

1. Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդի 1873 թ. կտակների վերաբերյալ գործի համաձայն՝ շուշեցի Պողոս Գասպարի Ալեքսանյանը Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգման համար 1.000 ռուբլի է կտակել, պայմանով, որ եկեղեցու երեցփոխն ամեն տարի բանկից ստանա այդ գումարի տոկոսները և իր ու իր հանգուցյալ հարազատների հոգու հանգստության համար տարեկան հինգ անգամ՝ տաղավար տոներին, պատարագ մատուցի: Իսկ Շուշիում գտնվող հայրական տան իրեն պատկանող մասը այն ժամանակ, երբ կինն ու մայրը այլևս չեն կամենա ապրել այդտեղ, ըստ կտակի պետք է վաճառվի, գումարը պահվի բանկում, որի տոկոսները Ղազանչեցոց եկեղեցու երեցփոխը պետք է հատկացնի կտակարարի հանգուցյալ հոր կողմից վերականգնված Շուշիի գավառի Նոր-Շեն գյուղի եկեղեցու քահանաներին իրենց ծա-

նայության ու կտակարարի ծնողների հիշատակին տարեկան հինգ անգամ պատարագ մատուցելու համար¹:

2. Շուշեցի Հակոբ Բալայանցը 1881 թ. քաղաքի բոլոր եկեղեցիներին և Կուսա-նաց վանքին 2.000 ռուբլի է կտակել, որը, ըստ 1916 թ. փետրվարի 11-ին կոնսիստորիայի կողմից սինոդին ներկայացված հայտարարության, ստացվել է:

3. Սարգիս արքեպիսկոպոս Յասան-Ջալայանցը 1884 թ. իր կտակած գումարի մի մասը հատկացրել է Շուշիի քաղաքային վարչությանը²:

4. Շուշիի Ագուլյաց սբ. Աստվածածին եկեղեցու միաբան Յովհաննես քահանա Թառումյանցը 1886 թ. Շուշիի հոգևոր դպրոցին 300 ռուբլի է կտակել, որ այդ գումարը բանկում պահվի և դրա տոկոսներով մի աշակերտ պահեն. այդ աշակերտը պետք է լիներ Բարսեղ Աղաջանյանցի ազգից, կամ Գրիգոր Մուքիի Բարսեղյանցի ազգից, եթե նրանք էլ չունենան սովորող կամ չկամենան սովորել, պետք է ընդունել մի քահանայորդի, իսկ 300 ռուբլի գումարը պետք է հատկացվի իր սեփական տան վաճառքից հետո: Նա նաև իր սեփական տունը, որը գտնվում է Շուշիի Ագուլյաց եկեղեցու մոտ, նվիրել է հիշյալ եկեղեցուն, և իր մահից հետո կտակատարները պարտավորվել են վաճառել տունը և վաճառքի գումարից 300 ռուբլի հատկացնել հոգևոր դպրոցին, մնացած գումարը բանկում պահել ու տոկոսները տալ միաբան քահանաներին, իսկ տոկոսների կես մասն էլ մնա հոգուտ եկեղեցու, որի քահանաները պարտավոր էին շաբաթը մեկ անգամ պատարագ մատուցել՝ ուրբաթ օրերը՝ Չատիկից մինչև Յամբարձման տունը, կտակարարի և նրա կնոջ հոգու փրկության համար³:

5. Շուշեցի Հայրապետ Գրիգորի Հախումյանցը 1889 թ. Բաքվի մարդասիրական ընկերությանը 600 ռուբլի է կտակել, որի տոկոսները հանգուցյալի եղբոր ցանկությամբ մի քանի տարի ուղարկվել են Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձությանը⁴:

6. Սկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսին ուղղված Բաբու քաղաքի Ա. կարգի վաճառական Զրիստափոր Գրիգորի Թումայանցի հայտարարության համաձայն՝ նրա հայրը՝ շուշեցի Գրիգոր Հայրապետի Թումայանցը, 1892 թ. հունիսի 22-ին կազմած ինքնագիր, բայց ոչ նոտարական կտակով ավանդել է ժառանգներին աստվածահաճո նպատակների համար հատկացնել 75.000 ռուբլի: 1894 թ. Գրիգոր Թումայանցի մահից հետո ժառանգները՝ ցանկանալով հավերժացնել իրենց հոր հիշատակը, որոշում են կտակարարի նշանակած 75.000 ռուբլու փոխարեն 83.000 ռուբլի հատկացնել կրոնական և ուսումնական նպատակների համար: Այս գումարից Շուշիին է հատկացվել 5.000 ռուբլի՝ հոգուտ թեմական հոգևոր դպրոցի⁵: Այս աստվածահաճո գործի համար Գրիգոր Թումայանցի ժառանգները Հայրապետական օրհնության են արժանանում⁶:

7. 1896 թ. նոյեմբերի 3-ին շուշեցի ալեքսանդրապոլաբնակ Ալեքսանդր Յովհաննեսի Բաբայանցը կազմում է իր կտակը, որի համաձայն, ի թիվս այլ քաղաքների տարբեր հաստատությունների օգտին թողնված նյութական միջոցների, կտակել

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 70-72:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 43: Մանրամասն տե՛ս նաև «Արձագանք», Թիֆլիս, 1898, թ. 2-3, էջ 382, 1901, թ. 7, էջ 265, 1902, թ. 4, էջ 243, 1903, թ. 4, էջ 248, 1904, թ. 3, էջ 209:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1553, թթ. 1178-1179:

⁴ Նույն տեղում, թթ. 27, 43:

⁵ Նույն տեղում, ֆ. 56, ց. 18, գ. 286, 2 և շրջ:

⁶ Նույն տեղում, թ. 4 և շրջ:

Ե նաև Շուշիի հայկական ծխական դպրոցներին ի նպաստ 25 ռուբլի, Շուշի քաղաքի աղքատ հայերի ապաստարանին՝ 25 ռուբլի¹: Նույն Ալեքսանդր Բաբայանցը 1899 թ. Շուշիի ծխական դպրոցներին և այլ հաստատություններին 85 ռուբլի² է կտակել, որից 50 ռուբլին՝ Շուշիի ծխական դպրոցներին, որը, սակայն, 1901 թ. նոյեմբերի 30-ին ստացել է սինոդը, որովհետև դպրոցներն արդեն փակված էին³:

8. Համաձայն Էջմիածնի հայ - լուսավորչական սինոդի հոգևոր կտակների վերաբերյալ 1897 թ. թիվ 21 գործի, Համբարձում Հարությունի Ստեփանյանցը 1894 թ. կտակ է կազմել, որով Շուշիի հոգևոր թեմական դպրոցին է հատկացրել 10.000 ռուբլի, ինչպես նաև աղքատ ընտանիքներից մեկական տղայի և աղջկա դաստիարակության համար՝ իր անվան թոշակ⁴:

9. Շուշեցի Բալասան Դաստակյանցը 1901 թ. թեմական դպրոցին 800 ռուբլի և մի քանի իրեր է կտակել, բայց կտակատար Իսահակ Թադևոսյանցը ներկայացրել է միայն 400 ռուբլի, հայտնելով, որ մնացյալը ծախսված է կտակողի թաղման համար⁵:

10. Հաղորդակցության ճանապարհների ինժեներ Խաչատուր Ավետիսի Եարամիշյանցը 1903 թ. Ղազանչեցոց եկեղեցուն իբրև սկզբնական ֆոնդ 1.000 ռուբլի է նվիրել, որի տոկոսները պետք է տրվեին նույն եկեղեցու զառամյալ քահանաներին, ինչը և արվել է:

11. Շուշեցի Մարգարիտ Մելիք-Շահնազարյանցը 1907 թ. Ղազանչեցոց եկեղեցուն 500 ռուբլի է կտակել, որի տոկոսներով կտակողի անունով թեմական դպրոցում պետք է որդեգիրներ պահվեին: Դրամը տրվել է եկեղեցուն:

12. Համաձայն Թիֆլիսի նոտար Կլիմենտ Իվանի Նիկոլանի 1910 թ. անշարժ գույքի ակտերի գրանցման գրքի քաղվածքի՝ Բաբվի առաջին աստիճանի վաճառական Սիմեոն Առաքելի Առաքելյանը, որ ժամանակավորապես գտնվում էր Թիֆլիսում, 1910 թ. նոյեմբերի 12-ին կտակ է կազմել, ըստ որի կտակարարը իր կողմից ձեռք բերված ողջ անշարժ գույքը և իրեն պատկանող շարժական գույքի այն մասը, որը կնոջ սեփականությունը չէ, ակցիաները և այլն, ողջ իր կարողությունը, կտակատարներին պատվիրում է վերածել կանխիկ գումարի, որի մի մասը կտակում է հարազատներին, 15.000 ռուբլի հատկացնում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանին, իսկ մնացած կարողությունը՝ Շուշիում և գավառում՝ առավելապես հայերով բնակեցված գյուղերում, տեխնիկական և արհեստագործական բաժիններով գյուղատնտեսական դպրոցներ կամ գյուղատնտեսական բաժիններով դպրոցներ բացելու, որոնցից մեկը պետք է լիներ գլխավոր և բաղկացած լիներ մի քանի դասարաններից, իսկ մնացածը՝ ցածր ուսումնական հաստատությունների տիպի:

Այդ նպատակի համար հատկացված կապիտալից եթե կտակատարները անհրաժեշտ կհամարեն 50.000 ռուբլի տրամադրել շենքի կառուցման և այլ կրթական բարելավումների համար, իսկ մնացած կապիտալի տոկոսները տրվեն արդեն բացված դպրոցների պահպանության համար: Բուն կապիտալը պետք է անձեռնմխելի մնար: Այդ կապիտալի հաշվին բացվող դպրոցների քանակը չէր կան-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1553, թթ. 1187 և շրջ:

² Նույն տեղում, թ. 43 և շրջ.:

³ Նույն տեղում, թ. 28:

⁴ Նույն տեղում, թթ. 147-148:

⁵ Նույն տեղում, թ. 43 և շրջ:

խորոշվում և կտակատարների հայեցողությանն էր թողնվում: Նրանց նոր դպրոցների բացման վայրի ընտրություն կատարելու իրավունք էր տրվում, սակայն մի պայմանով, որ դրանք միայն Շուշիի գավառում լինեին: Բացվող դպրոցների կամ ուսումնարանների տնտեսական մասը պետք է հոգաբարձուների խորհուրդը վարեր: Այն դեպքում, եթե նման դպրոցների բացումն ու պահպանությունն անհնարին կլինի կամ դրանք կփակվեն և կապիտալի տոկոսները չեն բավականացնի նման դպրոցների կարիքները հոգալուն, ապա այդ կապիտալի տոկոսները նպատակաուղղվեին Շուշի քաղաքում կամ Շուշիի գավառում հայ որբերի համար որբանոցներ բացելուն, որտեղ էլ նրանք գրագիտություն և արհեստներ կսովորեն: Ինչպես որբանոցում, այնպես էլ վերը նշված դպրոցներում և ուսումնարաններում անպայման պետք է երեխաներին հայոց լեզու և հայերեն լեզվով աստվածաբանություն դասավանդեն՝ դասաժամերի այնպիսի քանակով, որ նրանք կարողանան հիմնավորապես սովորել այդ առարկաները: Բոլոր դպրոցները, ուսումնարանները և որբանոցները, որ կբացվեին կտակարարի միջոցներով, պետք է կրեն «Սիմեոն Առաքելյան» կամ «Առաքելյանական» անվանումը: Եթե որբանոցների բացումն էլ չստացվեր, ապա ողջ կապիտալի տոկոսները պետք է անցնեին Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությանը, ով էլ այդ տոկոսներով կտակարարի անունով թոշակառու կպահեր առավելապես Շուշիի և Երևանի հայկական հոգևոր դպրոցների ու Էջմիածնի ճեմարանի սան չքավոր գյուղացիների երեխաներից: Թոշակառուների և թոշակի չափի ընտրությունը Վեհափառի հայեցողությանն էր թողնվում: Եթե ինչ-որ պատճառով ինչ-որ ժամանակ դա էլ անհնարին կլինի, ապա Վեհափառը պետք է ողջ կապիտալի տոկոսները տնօրինի իր հայեցողությամբ՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի հայկական գյուղերում եկեղեցիների ու դրանց կից նման այլ աստվածահաճո հաստատությունների բացման նպատակով: Բոլոր նման հաստատությունները պետք է կտակարարի ազգանունը կրեն: Կտակարարի կամքով կտակարարներ են նշանակվել Բաբվի առաջին կարգի վաճառականներ Գրիգոր և Նիկոլայ Մարտինի Առաքելյանները և Արսեն Սերգեյի Կրասիլնիկյանը: Նաև մինչ վերոհիշյալ կտակը կազմված բոլոր այլ կտակները պետք է անվավեր համարվեն¹:

Եղիշե ավագ քահանա Գեղամյանցի 1919 թ. դեկտեմբերին Հայրապետական դիվանին ուղղված գրության համաձայն՝ կտակատարները բացակայում են Բաբվից և կտակարարի կտակում ցուցակագրած իրեղեններն ու դրամական արժեքավոր թղթերը գտնվում են բանկերում՝ ոստիկանության հսկողության ներքո. կտակը ևս իշխանության ձեռքին է և կարող է միայն կտակատարների ներկա գտնվելուց հետո գործադրվել²: Կտակարարը մահանում է 1919 թ. փետրվարի 25-ին, որից հետո կտակը դեկտեմբերի 3-ին Բաբվի շրջանային դատարանի կողմից ներկայացվում է հաստատմանը: Դեկտեմբերի 30-ին Բաբվի շրջանային դատարանի քաղաքացիական բաժանմունքի հանրային դատական նիստի ժամանակ լսվում է Արսեն Կրասիլնիկյանի հայցադիմումի համաձայն կազմված գործը՝ Սիմեոն Առաքելյանի կտակի վերաբերյալ: Շրջանային դատարանը հաստատում է Թիֆլիսի նոտար Նիկոլանի կողմից կազմված կտակը³: 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայրապետական դի-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 2, թթ. 10-11 և շրջ.:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1, 1613, թթ. 4 և շրջ.:

³ Նույն տեղում, 9-12:

վանի և ՀՀ Արտաքին գործերի նախարարության արտասահմանյան հաստատությունների բաժնի միջև տարվող գրագրությունից պարզ է դառնում, որ Առաքելյանի կտակատարների բացակայության պատճառով այն դեռ չի գործադրվել և հնարավոր չի եղել լիովին պարզել հանգուցյալի թողած գույքի քանակն ու վիճակը¹: Վերջապես Կրասիլնիկյանի վկայության համաձայն՝ պարզվում է, որ հանգուցյալի ողջ գույքը՝ թե՛ շարժական և թե՛ անշարժ, գտնվում է Բաբվում, այնտեղ են գտնվում նաև մյուս կտակատարներն ու ժառանգները: Ուստի, Բաբվում կպարզվի ամեն ինչ և ողջ գումարը կկենտրոնացվի և առաջին իսկ հնարավորության դեպքում կփոխադրվի Երևան²:

13. Շուշեցի Թեոդորոս Խաչիյանցը 1911 թ. կտակել է քաղաքի Թեմական դպրոցին 1.500 ռուբլի, Մարիամյան օրիորդաց դպրոցին՝ 1.000 ռուբլի, Ժամհարյան հիվանդանոցին՝ 1.000 ռուբլի, Բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղին՝ 1.000 ռուբլի, ջուլհականոցին՝ 250 ռուբլի, որբանոցին՝ 250 ռուբլի, Մեղրեցոց եկեղեցու քահանաներին՝ 300 ռուբլի, Շուշիի չբավորներին՝ 200 ռուբլի, Կուսանաց վանքի միաբանուհիներին՝ 200 ռուբլի, Մեղրեցոց եկեղեցուն՝ 1000 ռուբլի, ընդհանուրը՝ 6.700 ռուբլի, որը և ստացվել է:

14. Էջմիածնի հայոց լուսավորչական սինոդի անդամ Բաբկեն վարդապետի և Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Չավեն վարդապետի Վեհափառին 1913 թ. հունիսի 17-ին ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ հանգուցյալ Թավադյանը, կտակատարներ Բոգդան Գասպարյանցի և Համբարձում Առաքելյանի վկայությամբ, Շուշի քաղաքին տարբեր բարեգործական նպատակների համար կտակել է 100.000 ռուբլի գումար, որից 25-30.000-ը կտակատարները խոստացել են թեմական դպրոցին³:

Այսպիսով, ներկայացնելով շուշեցի բարերարների կտակարար գործունեության ընդամենը մի քանի տասնյակ օրինակ, այդուհանդերձ դրանց իսկ միջոցով հնարավոր է դառնում ընդհանուր պատկերացում կազմել նրանց հայրենասիրության, գթասրտության և հայրենասնվեր կեցվածքի վերաբերյալ:

Вреж Арутюнян, Презентация шушинских спонсоров, - Предоставляя несколько примеров проделанной работы спонсоров становится ясно, что эти люди очень преданы Родине, отзывчивы и с открытой душой. Благодаря Амбарцуму Степанянцу, Григорию Тумаянцу, Теодоросу Хачиянцу, Симеону Арафелянцу и другим, удалось не только поднять, но и развить культуру и образование в городе Шуши.

Vrezh Harutyunyan, Presentation of Shushi's Sponsors, - Presenting several examples of Shushi's sponsors aid it becomes possible to realize their devotion and patriotism to their country. Due to Hambardzum Stepanyanc, Grigori Tumayanc, Teodoros Khachiyanc, Simeon Arafeljan it became possible not only to raise but also to develop education and culture of Shushi.

Վրեժ Հարությունյան - Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնի ասպիրանտ:

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 2, թթ. 12, 19: ֆ. 57, ց. 2, գ. 1613, թթ. 14, 16 18:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 2, թթ. 20:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 1003, թ. 44: